*Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:*

# ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, 2022, № 2 (54), БАРЕГОРЦ

ԱՐԺԱՆԻ ՄԵԾԱՐՈՒՄ

*Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն « Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանը հանձնեց Գուրգեն Մելիքյանին*

*Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում կայացավ Հայաստանեայց Առաքելական եկեղեցու բարձրագույն պարգևի՝ «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանի՝ Գուրգեն Մելիքյանին հանձնման հանդիսավոր արարողությունը: Պարգևատրյալ տիար Գուրգեն Մելիքյանին Ամենայն Հայոց Հայրապետի՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ.Վեհափառի կոնդակն ընթերցեց ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան և Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, իսկ կաթողիկոսական կոնդակում մասնավորապես նշված է. «Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել անձնապես ճանաչելու հավատավոր հայորդուդ և քաջատեղյակ ենք մեր ժողովրդի կյանքում Ձեր մեծ վաստակին:*

*Ծնվելով և հասակ առնելով հայ կյանքի ավանդույթներով հարուստ իրանահայ համայնքում՝ Դուք Ձեր հոգում կրում էք ազգասեր ու հայրենասեր ոգի և անկեղծ նվիրում հանդեպ հարազատ ժողովուրդը, որն ամբողջապես արտահայտել եք գիտական, կրթական ու հասարակական Ձեր երկարամյա գործունեության մեջ:*

*Այսօր առիթ ունենք անդրադառնալու, որ երկար տարիներ ղեկավարելով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը՝ Դուք գովարժան ավանդ եք բերել մեր երկրում արևելագիտության զարգացման և երիտասարդ մասնագետների պատրաստության գործին: Իբրև դասախոս և ֆակուլտետի ղեկան՝ Դուք հոգածու նվիրումով Ձեր սաների հոգիներում խնամել և զորացրել եք սերը հանդեպ գիտության լուսավոր աշխարհը: Անցնող տասնամյակներին նաև հեղինակել եք բազմաթիվ գիտական աշխատություններ, կատարել թարգմանություններ՝ արժանանալով գիտական բարձր կոչումների ու պարգևների:*

*Արցախյան հերոսամարտի տարիներին Դուք, անսալով Ձեր հոգու կանչին, միացաք մեր ժողովրդի ինքնապաշտպանական պայքարին՝ հանուն Արցախում բնակվող հայորդիների ազատ ու անկախ ապրելու իրավունքի: Ձեզ պես արիասիրտ հայորդիների խիզախումի ու անձնազոհությունների շնորհիվ մեր նորօրյա պատմությունը զարդարված է հաղթական փառավոր էջերով, որոնք սերնդեսերունդ պիտի խանդավառեն մեր ժողովրդին: Արցախին Ձեր ծառայությունները Դուք շարունակեցիք նաև հրադադարի պայմաններում՝ հիմնելով հիմնադրամ՝ հաջակցություն Քաշաթաղի շրջանի բազմազավակ ընտանիքների»:*

*Գործող արարողակարգի համաձայն՝ պարգևատրվողին ներկայացնում է երաշխավորը, որն այս պարագայում պատմ. գիտ.. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանն էր, որի խոսքը սիրով ներկայացնում ենք ընթերցողին :*

Վեհափա՛ռ Տեր,
Գերաշնորհ և արժանապատիվ հոգևոր Հայրեր,

Մեծ պատիվ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ազգիս Հայրապետի, հոգևոր հայրերի, մեծանուն գիտնականների ներկայությամբ խոսք ասել իր կյանքով ու գործունեությամբ իրավամբ լեգենդ կոչմանը արժանացած պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի մասին: Ես, լինելով նրա սանը և շուրջ 25 տարի բարեբախտություն ունենալով գրեթե ամենօրյա ռեժիմով տեսնել և շփվել նրա հետ, կցանկանամ խոսել նրա կերպարի մի քանի բնութագրական առանձնահատկությունների մասին, ուստի կներկայացնեմ շատերիս պատկերացումները Գուրգեն Մելիքյան Քաղաքացու, Գիտնականի, Ուսուցչի, Քրիստոնյայի մասին:

Գ. Մելիքյանը Հայաստանի օրինակելի և բառիս բուն իմաստով արժանի քաղաքացին է, ով անմնացորդ սիրում է իր Հայրենիքը և դա անում է ոչ թե բառերով, այլ գործով ու գործունեությամբ: Պետականությունը և Հայրենիքը որպես բացարձակ արժեք՝ նրա հավատամքն է, որին Գ. Մելիքյանը հավատարիմ է ավելի քանի ութ տասնամյակ:

Գ. Մելիքյանը համեստ գիտնական է՝ բայց բառիս լավ իմաստով. տիրապետելով իմացության և գիտելիքի ահռելի պաշարի և պարսից լեզվի, գրականության խորքային առանձնահատկություններին՝ նա երբեք չի զբաղվել ինքնագովեստով, իր գիտական վաստակը առաջին պլան չի դրել, այլ համեստաբար ստեղծել է գիտական լուրջ ուսումնասիրություններ, որոնք գիտական ծանրակշիռ արժեքներ են և գնահատվում են ինչպես իր ժամանակակիցների կողմից, այնպես էլ ուղենիշային կլինեն հաջորդ սերունդների համար:

Եթե կա մանկավարժ-ուսուցչի դասական կերպարի ընկալում, ապա դա ոչ թե 99, այլ 100 տոկոսով համապատասխանում է Գ. Մելիքյանին: Նա սովորեցնում է ոչ միայն լսարանում և կոնկրետ առարկաներ, այլ սովորեցնում է ինքն իրենով, իր վարքով, իր պահվածքով: Կան գիտնականներ, որոնց ասում են՝ թե նա քայլող հանրագիտարան է, Գ. Մելիքյանը քայլող ուսուցիչ է, ով սովորեցնում է ճիշտը, ճշմարիտը, բարոյականը, հայրենասիրականը իր ամեն քայլին: Երբ նա քայլում է ԵՊՀ միջանցքներով կամ Հայաստանի տարբեր վայրերով, այդ պահին էլ է դասավանդում, ընդ որում ոչ միայն արևելագետներին, այլև տարբեր ֆակուլտետների ուսանողներին և երիտասարդ ու ոչ այդքան դասախոսներին, ուղղակի մարդկանց, քաղաքացիներին, անցորդներին:

Եվ վերջապես, ի սկզբանե Գ. Մելիքյանը քրիստոնյա է, հայ - քրիստոնյա: Նա ապրում է բարեպաշտ քրիստոնյայի կենցաղով ու պահվածքով: Ես չեմ հիշում որևէ ճաշի սեղան, որ Մելիքյանը չսկսի աղոթքով և չավարտի աղոթքով: Նրա կողքին մենք էլ ենք դառնում ավելի բարեպաշտ և իր ներկայությամբ նա դրական իմաստով պարտադրում է լինել զուսպ, լինել առաքինի: Մելիքյանին լիովին խորթ են նյութապաշտությունը, շքեղության ձգտումը, պաշտոնամոլությունը, քաղաքական կոնյուկտուրան:

Նա անկյութական մարդ է, բարերար, ում ձեռքի տակով շատ գումարներ են անցել և անցնում, սակայն դրա կեղտը չի կպչում նրան, որովհետև ազնիվ է, որովհետև դրանք ծախսում է ի նպաստ կարիքավորների, այլ ոչ թե բարելավում է իր կենցաղը: Մելիքյանը ապրում է այնպես, ինչպես քարոզում է և ինչին հավատում է, ուստի հենց այսպիսի մարդիկ են արժանի բարձրագույն պարգևների և՛ պետական, և՛ եկեղեցական: Ի դեպ, լինելով Հայաստանի և Արցախի Հանրապետությունների գրեթե բոլոր պարգևներին, մեդալներին, շքանշաններին արժանացած մարդ՝ նա երբեք դրանցով չի փորձում ինքնագովեստով զբաղվել, հրապարակայնորեն գրեթե չի էլ խոսում այդ մասին, որ արժանացել է դրանց, այլ

խոնարհաբար ընդունելով դրանք՝ իր առաքելությունը ոչ թե համարում է ավարտված կամ իրականացրած, այլ դրանք ընդունում է որպես լրացուցիչ պատասխանատվություն հայրենիքին իր անմնացորդ ծառայությունը շարունակելու գործում:

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք մեր որդիական խոնարհումը և երախտագիտությունը հայտնել Ձեզ համալսարանական և ակադեմիական գիտնականների, դասախոսների և բազմահազար ուսանողների անունից իրական Ուսուցչին, իրական Քրիստոնյային, իրական Մանկավարժին ու Քաղաքացուն մեր Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգևին արժանացնելու համար և վստահ ենք, որ այդ պարգևով ևս Մելիքյանը իր հոգում, իր ներքին ընկալման մեջ ավելացնելու է իր պատասխանատվությունը հանուն Հայաստանի և Արցախի և հանուն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու իր ծառայությունը շարունակելու գործում:

*ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ*
*ԵՊՀ արևելագիտության*
*ֆակուլտետի դեկան,*
*պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր*

---

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ՝ ԱՐՑԱԽ

Ապրիլի 18-19-ին հերթական բարեգործական ծրագրով Արցախում էին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի անդամ Աշոտ Պողոսյանը, հիմնադրամի լավ բարեկամ, շվեդաբնակ բժիշկ, իրանահայ Հենրիկ Շահնազարյանը, Բոստոնից եկած բժշկուհի Անուշ Սահակյանը, ով այցելեց նաև Մարտունի քաղաք, ծանոթացավ տեղի բուժմիավորման պայմաններին՝ հետագայում օժանդակելու նպատակով: Բժիշկ Շահնազարյանը նաև հագուստներ տրամադրեց Ստեփանակերտում գործող՝ Քերոլան և Ջորջ Նաջարյանների հիմնած «Արփեն» մոր և մանկան պահպանման կենտրոնին, որի գլխավոր հովանավորն այժմ նույնպես Գ. Մելիքյանի ղեկավարած հիմնադրամն է:

Բազմիցս անդրադարձել ենք հիմնադրամի՝ հատկապես Քաշաթաղի շրջանում ծավալած գործունեությանը: Արցախյան վերջին պատերազմը շատ բան է փոխել. այժմ Քաշաթաղի շրջանում միայն «կյանքի ճանապարհի» վրա գտնվող Աղավնո գյուղում և Բերձոր շրջկենտրոնում են հայեր մնացել, մնացած բնակավայրերն անցել են թշնամու վերահսկողության տակ:

Այս ուղևորության հիմնանպատակներից էր Աղավնոյի Գարեգին Նժդեհի անվան միջնակարգ, ինչպես նաև Բերդաձորի ենթաշրջանի Հին Շեն, Մեծ Շեն, Եղցահող և Լիսագոր գյուղերի դպրոցների աշխատակիցներին (թվով 91 հոգի) դրամական օժանդակություն հատկացնելն էր: Բացի այդ, պատերազմի հետևանքով ամեն ինչից զրկված 10 բազմազավակ վերաբնակ ընտանիքների հատկացրեց կենցաղային տեխնիկա՝ հեռուստացույց, սառնարան, լվացքի մեքենա:

Առաջին կանգառն Աղավնո գյուղում էր: Գ. Նժդեհի անունը կրող դպրոցում համայնքի ղեկավար Անդրանիկ Չավուշյանը, տնօրեն Պողոս Աղաբեկյանը, ուսուցիչները սիրով դիմավորեցին մեր պատվիրակությանը: Դպրոցի ողջ աշխատակազմին նախատեսած դրամական օժանդակությունը հանձնելով՝ Գ. Մելիքյանը հետաքրքրվեց՝ ինչի կարիք ունեն և՛ դպրոցում, և՛ համայնքում ընդհանրապես: Համայնքի ղեկավարը, դպրոցի տնօրենը շնորհակալություն հայտնեցին՝ կարևորելով այցը ոչ այնքան դրամական աջակցության, որքան բարոյական օժանդակության համար, որով գնահատվում է իրենց աշխատանքը, նվիրումը հայրենի գյուղին, որը մեծ դժվարությամբ է դիմակայում ներկա քաղաքական իրավիճակում:

2016 թ. այս օրերին տողերիս գրողը Ա. Չավուշյանի հետ Մատաղիսի դիրքերում էր: Ապրիլի 18-ին ծնվեց նրա Ավետիք որդին: Հիշեցինք հերոսական այդ օրերը, որ կարողացանք դիմակայել թշնամուն և թույլ չտվինք մտնել մեր երկիրը: Այսօր այլ է իրավիճակը... Տնօրենը տեղեկացրեց՝ դպրոցում աշխատանքներն ընթանում են իրենց հունով, կրթական ծրագրերը իրականացվում են: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» տարիներ շարունակ, բացի բնակիչներին նյութապես օժանդակելուց, տարին երկու անգամ ծառատունկ էր կազմակերպում Բերձորում և հարակից տարածքներում, Կովսականում: Այժմ Գորիս – Ստեփանակերտ ճանապարհի եզրերին 20-ից ավելի պուրակ ու ծառուղի կա, որոնց հիմնադիրը Գ. Մելիքյանի ղեկավարած հիմնադրամն է և անձամբ ինքը: Այս օրերին էլ հիմնադրամն զբաղված է պուրակների ու ծառուղիների ծառերի խնամքով: Ծառեր են տընկվել նաև Աղավնոյում: Մեր այցի պահին այս հատվածում բարեկարգվում էր գերմանացի մեր բարեկամի՝ պրոֆեսոր Թեսսա Հոֆմանի անունը կրող ծառուղին:

Բերձորում մեր պատվիրակությանը դիմավորեցին բազմազավակ ընտանիքների ներկայացուցիչներ: Ճշգրտվեց կենցաղային տեխնիկայի կա-

ռիք և կթան կով պահելու ցանկություն և հնարավորություն ունեցող բազմանդամ ընտանիքների ցանկը:

Բերդաձորի ենթաշրջանի համայնքների ղեկավարները, դպրոցների տնօրենները, ինչպես նաև բազմազավակ ընտանիքների ներկայացուցիչները Գ. Մելիքյանին հանդիպեցին Բերձոր–Ստեփանակերտ մայրուղու եզրին գտնվող պուրակներից մեկում, որը կրում է Վահագն Մահտեսի - Հակոբյանի անունը և հիմնադրվել է դարձյալ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից՝ ԵՊՀ ուսանողների մասնակցությամբ: Այստեղ, ուսուցիչներին հատկացվող գումարից բացի, տարբեր գյուղերից 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին հատկացվեցին սառնարան, լվացքի մեքենա, հեռուստացույց:

Եղցահողի գյուղական համայնքի ղեկավար Արտակ Հակոբյանը տեղեկացրեց՝ պատերազմական գործողությունների հետևանքով գյուղը, բարեբախտաբար, մեծ վնասներ չի կրել: Այժմ համայնքում վերաբնակեցվել են բռնազավթված տարածքներից ընտանիքներ՝ Արևշատից, մեկը՝ Քիրսավանից, Քաշաթաղի շրջանից: Եվս մոտ 15 ընտանիքի կարող են ընդունել: Հայկ Սարգսյանն ունի 5 երեխա, բնակվում է Հին Շեն գյուղում, որն այսօր շատ է մոտ թշնամու դիրքերին: Նպատակ չունեն լքելու ծննդավայրը: Բնակվելու են հայրենի հողում և շենացնելու են այն:

Արցախյան առաջին գոյապայքարի ժամանակ Հին Շենը տվել է 10-ից ավելի նահատակ, որոնց թվում է ԲԻԽ-ի փոխնախագահ Առնո Մկրտչյանը, ով 1992 թ. մայիսի կեսերին ձերբակալվեց խորհրդային բանակի և թուրքական ՕՄՕՆ-ի

*Արփեն կենտրոնում են՝ Սարգիս Գալստյանը, Հենրիկ Շահբազյանը և Գուրգեն Մելիքյանը*

կողմից և տանջամահ արվեց Բաքվի բանտերում: Այժմ Բերդաձորի Եղցահողի գյուղական համայնքում, որի կազմում են նաև Կանաչ Թալա և Տասի Վերստ-Ծաղկաձոր գյուղերը, նոր բնակարաններ են կառուցվում նաև տեղահանված ընտանիքների համար: Կանաչ Թալայում է բնակվում տեղահանված Յուրա Ազարյանի 3 երեխա ունեցող ընտանիքը, որին հատկացվեց սառնարան: Եղցահող գյուղից 4 երեխաների հայր Արմեն Պետրոսյանը եկել էր Վաչագան որդու հետ և ստացավ լվացքի մեքենա: Գոհ է, սակայն այսօր բոլորին հուզում է մեր երկրի քաղաքական իրավիճակը, ինչ է լինելու վաղը... Որն է Վաչագանի ապագան...

Հրաժեշտ տվեցինք հերոսական Բերդաձորի բնակիչներին և ուղևորվեցինք Ստեփանակերտ: Տխուր է՝ մերը չի Շուշին, մեզ մեր տուն թողնում են խաղաղապահները՝ ստուգելով փաստաթղթերը: Թեև բարեհամբույր են ՌԴ զինվորականները, սակայն ծանր է երևույթը: Ստեփանակերտի «Արփեն» մոր և մանկան կենտրոնին, որ հիմնել են բարերարներ Քերոլան և Ջորջ Նաջարյանները և այսօր հովանավորվում է նաև մեր հիմնադրամի կողմից, տրամադրվեց 60 արկղ ելակի մուրաբա, իսկ Հ. Շահնազարյանը նվիրեց հագուստներ:

Այցելեցինք նաև Արցախի Ասկերանի շրջանի Դահրավ գյուղ, որտեղ հիմնադրամի օգնությամբ արդեն վերանորոգվել է գյուղի ակումբի կտուրը: Հիմնադրամը նախատեսել է նաև օժանդակել ակումբի հիմնանորոգմանը: Այցելեցինք նաև գյուղի դպրոց՝ ծանոթանալու կարիքներին և հնարավորինս աջակցելու կրթօջախի աշխատանքներին:

Ինչպես գիտենք՝ ԵՊՀ-ն միացել է ՀՀ հանրային հեռուստաընկերության և «Ապրելու Արցախ» հիմնադրամի՝ համատեղ իրականացվող «100 տուն Արցախում» նախագծին և ֆինանսավորել է մեկ տան կառուցումը Դահրավում: Այցելեցինք շինհրապարակ, որտեղ կառուցվում են այդ 100 տները: ԵՊՀ-ի կողմից ֆինանսավորվող տան պատերն արդեն կանգուն են:

Նույն օրը վերադարձանք Երևան: Բերձորում կանգ առանք Լեոնիդ Ազգալդյանի անվան պուրակում, որտեղ նաև հերոսի հուշաքարն է՝ «Սա Հայաստան է և վերջ» գրությամբ: Այս պուրակի հարևանությամբ է բարոնուհի Լեդի Քոքսի անվան պուրակը, որի ծառերից մեկը վերջերս մեքենայի հարվածից ծռվել ու վնասվել էր: Բարձրացրինք ծառը, հենարանով շտկեցինք՝ հուսալով՝ դիմանալու է ու դառնալու հսկա սոսի: Մտածում եմ՝ Քաշաթաղի ու ողջ Արցախի խորհրդանիշն է այս ծառը... Բժիշկ Հ. Շահնազարյանը նաև ծառ տնկեց շվեդահայ համայնքին նվիրված պուրակում և Ա. Սահակյանի հետ մեկնեցին ք. Մարտունի՝ ծանոթանալու տեղի բուժմիավորմանը՝ անհրաժեշտ օգնություն կազմակերպելու նպատակով:

Նույն ճանապարհի եզրին է նաև ՀՀ ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի անվան պուրակը՝ ԵՊՀ

ուսանողների մասնակցությամբ տնկված արդեն բերքատու ծառերով և հուշաքարով, որի հարևանությամբ ծաղկել է տարիներ առաջ տնկած սալորենին: Լեգենդար հերոսի մարգարեական խոսքն է փորագրված հուշաքարին. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»: Իսկ այսօր մենք կանգնած ենք այդ վտանգի առջև, և որպեսզի չիրականանա Ազգային հերոսի զգուշացումը, պետք է ազգովի տեր կանգնենք Արցախին, օժանդակենք յուրաքանչյուրս մեր հնարավորությամբ:

ԶՈՀՐԱԲ ԸՌՔՈՅԱՆ

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» հանդես է եկել բարեգործական նոր նախաձեռնությամբ՝ այդպես ընդարձակելով Արցախի հայ բնակչությանն աջակցելու իր ավանդական գործունեության ոլորտները: Այս անգամ հիմնադրամի տնօրենը մտահղացել է մի ծրագիր, որը նպատակաուղղված է սահմանամերձ բնակավայրերի դպրոցականներին և նորածիններին: Ըստ այդ նախաձեռնության՝ այսուհետ պարբերաբար սեզոնային հագուստ է բաժանվելու դպրոցահասակ երեխաներին: Նշված ծրագրի իրագործումը լինելու է տևական և ձգտելու է ընդգրկել հնարավորինս շատ երեխաների:

*Բարերար Սերոժ Մեսրոպյանը և Գուրգեն Մելիքյանը Ստեփանակերտի «Արփեն» մայր և նորածին կենտրոնին երեխաների ամառային հագուստներ հանձնելիս*

Օրերս իրականացվեց այդ նախաձեռնության առաջին փուլը: Հիմնադրամի տնօրենի և Աղավնո, Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր և Եղցահող գյուղերի դպրոցների տնօրենների նախապես համատեղ կազմած ցուցակով հարյուր և մեկ ձմեռային տաք հագուստ բաժանվեց տարբեր տարիքի դպրոցահասակ աղջիկների և տղաների:

*Արցախի գեղատեսիլ բնության մեջ*

Ազգանվեր այդ գործին իր մասնակցությունն ունեցավ նաև «Արմտեքս» ՍՊԸ-ն: Բարձրորակ հագուստի արտադրությամբ արդեն հայտնի դարձած այդ ընկերությունը ժամանակին ու պատասխանատվությամբ իրականացրեց պատվիրված հագուստի խմբաքանակը հիմնադրամին ներկայացնելու իր գործը: Դրան զուգահեռ, ցանկանալով նաև իր մասնակցությունը բերել բարեգործական նախաձեռնությանը, ընկերությունը պատվիրված հագուստի խմբաքանակը հիմնադրամին տրամադրեց 15-20 տոկոս զեղչ գներով: Սա ևս մի լավ օրինակ է բարեգործական հիմնադրամի և հայրենական արտադրողի հայրենանվեր համագործակցության:

Ցանկացողների համար ստորև ներկայացնում ենք նման նախաձեռնություններին մասնակից լինելու մի շարք այլ օրինակներով ևս հայտնի «Արմտեքս» ՍՊԸ-ի կոնտակտային տյալները:

Հեռ.: +37491510099; Էլ. հասցե՝
ara.aghajanyan@gmail.com
Տնօրեն՝ Արա Աղաջանյան

ԳՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ *Վարուժան Խաստուր*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

*(Ծննդյան 85 - ամյակի առթիվ)*

*Տարիների բարձունքից դու նայում ես աշխարհին*
*Վաստակումի փառապանծ շնորհներով ոգեբավ,*
*Բայց քո մեջ է դեռ հորդում այն թրթռուն պատանին,*
*Որ լուսաբացը ուսին՝ նախնյաց երկիրը եկավ:*

*Աչքերի մեջ փողփողէջ երազանքներ վառվռուն*
*Եվ Իրանի արևի ցոլանքները ոսկեման՝*
*Նա շաղ տվեց ամենուր հրայրքները իր ոգու*
*Եվ շիրազյան վարդերի լուսաբույրը հուրհրան:*

*Եվ ուսանեց, կայացավ...դարձավ կաղնի կրթության,*
*Սաղարթներին բարձրուղէշ՝ Արևելքը ծածանվեց,*
*Հիացումով սիրեցին ուսանողները նրան*
*Եվ ճախրեցրին նրա հետ հավատամքները իրենց:*

*Վրեժ հայրը բերկրեցավ, Մարթա մայրիկը հուզվեց,*
*Գորովանքով հղեցին աղոթքները պահպանիչ,*
*Նրանց հոգու երթերում հպարտությունը լցվեց՝*
*Իրենց զավակը դարձավ լույս ու սիրո ուսուցիչ:*

*Նա խանդավառ ձեռնարկեց ծրագրեր մեծամեծ,*
*Բլդան գետի ճամբարից բացեց ծիրը հայրենյաց,*
*Եվ անտառի դիցուհին նրա ջանքերը օրհնեց,*
*Գողթան մանկտիք տաղեցին ոգեմղումը անանց:*

*Եվ նա կպավ եռանդով աստվածահաճ իր գործին,*
*Վերականգնեց տաճարներ, ծառաստուններ իրացրեց,*
*Սրտի հուրքերը բոսոր սիրով տվեց ամենքին,*
*Մեկնած ձեռքերը իրեն երբեք դատարկ չթողեց:*

*Հիմա ժպտում է ահա երանությամբ խորագետ*
*Հայրենապաշտ զավակի ոգորումով առհավետ,*
*Շնորհավոր վաստակդ, այդ գիտության և ասպետ,*
*Ուսուցչության և լույսի մեր փառավոր Վեհապետ:*

*14.12.2021*

## 2022 Թ. ՆԱԽՈՐԴ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Հ/հ | Ամսաթիվ | Անուն, ազգանուն | Վճարման նպատակ | Գումարը՝ ՀՀ դրամ | Համարժեք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 30.08.21 | Վահան Ալադաղյան-ԱՄՆ | «Ազատ Արցախ» թերթին | 140 000 | |
| 2 | 07-01-22 | Մելիքյան Գուրգեն | Իմ սիրելի, համեստ, խոնարհ ընկերոջս՝ Ռուբեն Մարգարյանի հիշանակին՝ ի փոխան ծաղկեպսակի 07.01.2020թ. | 20000 | |
| 3 | 10-01-22 | Մելիքյան Գուրգեն | Փոխառության վերադարձ | 1 448 880 | 3000 USD |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | 10-01-22 | Նորամայր և Հարմիկ Ավանեսյաններ-ԱՄՆ | Օգնություն | 48750 | 100USD |
| 5 | 13-01-22 | Թեքեյան կենտրոն (Բագրատ Նազարյան)-ՄԲ | 100,000 գրքի տպագրության վճար, 550000 Արցախի, Ջավախքի ուսանողների համար | 650000 | |
| 6 | 13-01-22 | ԵՊՀ հիմնադրամ | Օգնություն | 2000000 | |
| 7 | 17-01-22 | Golden State Seafood-ԱՄՆ | Օգնություն | 1192580 | 2480USD |
| 8 | 18-02-22 | «Գազպրոմ Արմենիա», ՓԲԸ | “Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ՈՒՀՀ-ից Գ. Մելիքյան հիմնադրամին Աղավնո, Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր և Եղցահող գյուղերի դպրոցներին | 1 900 000 | |
| 9 | 25-02-22 | Ժակլին Աբրահամյան-ԱՄՆ | Սիրելի Լալա Մելիքյանի հիշատակին | 24300 | 50 USD |
| 10 | 25-02-22 | Tony Kahve-ՄԲ | Օգնություն | 485 500 | 1000 USD |
| 11 | 28-02-22 | Gurgen Melikyan Multichildren family | Student Tuition | 4 339 080 | 9000 USD |
| 12 | 02-03-22 | Մելիքյան Գուրգեն | Ծառերի ծրագիր՝ սիրելի Ալբերտ Ոսկանյանի հիշատակին ի փոխան ծաղկեպսակի 27.01.2022 թ. | 20000 | |
| 14 | 16-03-22 | Վահան Ալադաղյան-ԱՄՆ | Օգնություն «Ազատ Արցախ» թերթին | 50 000 | |
| 15 | 24-03-22 | Կարինե և Էդվարդ Ներսիսյաններ-ԱՄՆ | Օգնություն | 146 745 | 300 USD |
| 16 | 24-03-22 | Gurgen Melikyan Multichildren family | Teachers and books | 4 157 775 | 8500 USD |
| 17 | 04-04-22 | Արմոնդ և Լիլիթ Վարդանյաններ-ԱՄՆ | Օգնություն | 484 780 | 1000 USD |
| 18 | 18-04-22 | Gurgen Melikyan Multichildren family | Donation | 3 300 080 | 7 000 USD |
| 19 | 28-04-22 | Վահան Ալադաղյան-ԱՄՆ | Օգնություն «Ազատ Արցախ» թերթին | 94 000 | |
| 20 | 03-05-22 | Gurgen Melikyan Multichildren family | Donation | 3 147 550 | 7000 USD |
| 21 | 03-05-22 | Տեր-Սահակով Արսեն | Օգնություն | 80000 | |
| 22 | 20-05-22 | Նորայր Մամբրեի Թևանյան | ԽԵԱ Ծրագիր | 310 000 | |
| 23 | 23-05-22 | Շմավոն Շմավոնյան | Գրքերի ծրագիր | 1 058 000 | 2300 USD |
| 24 | 24-05-22 | Մելիքյան Գուրգեն | Վաղեմի ընկերոջս, հայրենասեր, հայրենանվեր Վարդգես Մարգարյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի | 20000 | |
| 25 | 26-05-22 | Հենրիկ Շահնազարյան-Շվեդիա | Օգնություն /Շվեդիա/ | 200000 | |
| 26 | 27-05-22 | Ալֆա ֆուդ սերվիս ՍՊԸ | Բարեգործություն | 500 000 | |
| 27 | 01-06-22 | ՀՀ Գիտությունների ազգ. Ակադեմիա | Գրքերի ծրագիր | 200 000 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 28 | 15.06.22 | Վահան Ալադաղյան-ԱՄՆ | Օգնություն «Ազատ Արցախ» թերթին | 42000 | |
| 29 | 12-07-22 | Քնար Ղազանչյան-ԱՄՆ | Օգնություն | 739800 | 1800 USD |
| 30 | 12.07.22 | Tony Kahve-ՄԲ | Օգնություն | 205500 | 500 |
| 31 | 17.07.22 | Hambik Baktchedjian-ԱՄՆ | Օգնություն | 206500 | 500 |
| 32 | 19.07.22 | Կարո Շահբազյան | Օգնություն-գրքերի ծրագիր | 150000 | |
| 33 | 25.07.22 | Մեդիկ և Սերոժ Մեսրոպյան-ԱՄՆ | Օգնություն | 294000 | 700 USD |
| | | Ընդամենը՝ | | 27655820 | |

**Հիմնադրամի հոգաբարձությունը Արցախին օգնության կոչով վերջերս դիմել էր ԵՊՀ ֆակուլտետների աշխատակիցներին: Ստացվել են հետևյալ դրամական նվիրատվությունները.**

| | Ամսաթիվ | Ֆակուլտետ | Օգնության չափը ՀՀ դրամով |
|---|---|---|---|
| 1 | 16-05-2022 | ԵՊՀ աշխարհագր. Ֆակ | 113 000 |
| 2 | 30-05-2022 | ԵՊՀ բանասիր. Ֆակ | 273 000 |
| 3 | 30-05-2022 | ԵՊՀ իրավագիտ. Ֆակ | 816 200 |
| 5 | 30-05-2022 | Ալիկ Ղարիբյան | 60 000 |
| 4 | 01-06-2022 | ԵՊՀ ֆարմացիայի ինստ. | 89 000 |
| 6 | 08.06.2022 | ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակ. | 127 000 |
| 7 | 08.06.2022 | ԵՊՀ տնտեսագիտ. ֆակ. | 136 000 |
| 8 | 09.06.2022 | ԵՊՀ արևելագիտ. ֆակ. | 350 000 |
| 9 | 23.06.2022 | ԵՊՀ ժուռնալիստ.ֆակ. | 60 000 |
| 10 | 23.06.2022 | ԵՊՀ ԵԼՀ ֆակ. | 82 000 |
| 11 | 23.06.2022 | ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակ. | 60 000 |
| 12 | 09.07.2022 | ԵՊՀ ռուս բանասիրության ֆակ. | 170 000 |
| | | Ընդամենը՝ | 2,336,200 |

ԱՄՆ-ից մի խումբ մեր երիտասարդ հայրենակիցները նախաձեռնել են ֆինանսական աջակցություն ցուցաբերել բազմազավակ ընտանիքներին հիմնադրամի միջոցով: Ողջունելով ազնիվ երիտասարդների հայրենանվեր արարքը՝ շնորհակալությամբ հրապարակում ենք նրանց օրինակելի անունները.

| **Անուն** | **Ազգանուն** | **Գումարի չափը ՀՀ դրամ** |
|---|---|---|
| Եդիգարյան | Էդգար | $100 |
| Խանլարյան | Սևադա | $300 |
| Հակոբյան | Սևակ | $100 |
| Մարտիրոսյան | Կարո | $100 |
| Մեսրոպյան | Արմեն | $300 |
| Տերտերյան | Անդրանիկ և Անի | $300 |

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

| Հ/հ | ԲՈՒՀ | Կրթաթոշակի անվանումը և ստացողը | Գումար |
|---|---|---|---|
| 1 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Զարչյանի անվ., Եգորյան Սոնա, ֆարմացիայի ֆակուլտետ, 4-րդ կուրս | 30 000 |
| 2 | ԵՊՀ հիմնադրամ | Դոկտոր Նազելի Զարչյանի անվ., Գասպարյան Աննա, ֆարմացիայի ֆակ., 3-րդ կուրս | 30 000 |
| 3 | ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվ., Սիրաքյան Էլեն, հայ բանասիր. ֆակուլտետ,3-րդ կուրս | 30 000 |
| 4 | Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվ., Ղազարյան Գոռ, 3-րդ կուրս | 10 000 |
| 5 | Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա | Լուսինե Զաքարյանի անվ., Սիմոնյան Սոֆյա, 2-րդ կուրս | 10 000 |
| 6 | Առնո Բաբաջանյանի անվան երաժշտ. քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվ., Մարգարյան Նազելի, 4-րդ կուրս | 10 000 |
| | **Ընդամենը՝** | **120 000** | |

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՎԱԿՆԵՐԻՆ

| № | Ազգանուն, Անուն | Բնակավայր, երեխաների քանակ | Օգնության տեսակ |
|---|---|---|---|
| 1 | Հակոբյան Ռուզան<br>Պողոսյան Անդրանիկ | Ասկերանի շրջան, Ռեվ գյուղ, 5 երեխա, Ռոբերտ, Արմեն, Էմանուել, Անդրանիկ, տեղահանված՝Բերձորից | 50000 դրամ պարգևատրում 5-րդ երեխայի համար լվացքի մեքենա, և 1 կով |
| 2 | Մկրտչյան Մարո<br>Ավանեսյան Սասուն | Մեծ Շեն, 4 երեխա, Ռուզան, Յաշա, Արսեն, Կարինե, տեղահանված՝ Վազգենաշենից | Տրվել է կով, լվացքի մեքենա, հեռուստացույց |
| 3 | Մկրտչյան Տաթև<br>Սմբատ Հայրապետյան | Մեծ Շեն, 4 երեխա, Հարություն, Արարատ, Ֆելիքս, Դավիթ, տեղահանված՝ Մովսեսաշենից | Տրվել է կով, հեռուստացույց |
| 4 | Հարությունյան Անուշ<br>Հարությունյան Անդրանիկ | Մեծ Շեն, 5 երեխա, 44 օրյա պատերազմում վիրավորվել է տղան՝ Կարեն Հարությունյանը, տեղահանված չէ | Տրվել է կով |
| 6 | Սարգսյան Նարինե<br>Սարգսյան Հայկ | Հին Շեն, 4 երեխա, Արարատ, Նվեր, Հակոբ, Գոռ | Տրվել է կով |
| 7 | Մաթևոսյան Սեդա<br>Բաբայան Սպարտակ | Լիսագոր, 4 երեխա, Գոհար, Մանե, Արման, Նարե | Տրվել է կով |
| 8 | Ասրյան Մարիամ<br>Ամիրշատյան Արսեն | Հին Շեն, 4 երեխա, Սաթենիկ, Սվետլանա, Սուսաննա, Դանիել | Տրվել է կով, |
| 9 | Բաբայան Էլլադա | Ստեփանակերտ, 2 երեխա , | Նոր տարվա նվերներ |
| 10 | Մանուկյան Քրիստինե<br>Մուրադյան Արտակ | Լիսագոր, 6 երեխա, սպասվում է 7-ը: Սուրեն, Սյուզի, Սարգիս, Սոնա, Սոֆիա, Սաթենիկ, տեղահանված չեն | Տրվել է սառնարան |
| 11 | Հովսեփյան Անի<br>Մաթևոսյան Արա | Աղավնո, 3 երեխա, տեղահանված չէ | Տրվել է կով և սառնարան |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Սաֆարյան Լիաննա | 9 երեխա, Ստեփանակերտ, տեղահանված՝ Թաղավարդից | Տրվել է լվացքի մեքենա |
| 13 | Պետրոսյան Լուսինե<br>Պետրոսյան Արմեն | 4 երեխա, Եղցահող | Լվացքի մեքենա, կով |
| 14 | Էլյազյան Նելլի<br>Հակոբյան Նվեր | 3 երեխա, Եղցահող | Տրվել է հեռուստացույց |
| 15 | Բաղդասարովա Սուսաննա<br>Հարությունյան Անդրանիկ | 4 երեխա, Եղցահող | Տրվել է հեռուստացույց |
| 16 | Ազարյան Ռիտա<br>Ազարյան Յուրա | 3 երեխա, Եղցահող համայնք, գ. Կանաչ Թալա, տեղահանված՝ Հաղրութից | Տրվել է սառնարան, կով |
| 17 | Գասպարյան Սվետլանա (Միայնակ) | 4 երեխա, Եղցահող | Տրվել է լվացքի մեքենա |
| 18 | Էնիկալոպյան Կարինա<br>Համբարձումյան Սամվել | 6 երեխա, Մարտակերտ, տեղահանված՝ Շուշիից | Տրվել է հեռուստացույց |
| 19 | Էնիկալոպյան Աննա<br>Էնիկալոպյան Կարեն | 4 երեխա, սպասում է 5-ին, Ստեփանակերտ, Ռաֆֆու փողոց, տուն 21, տեղահանված Շուշիից | Տրվել է ուտելիք, երեխայի տակդիր, 50,000 դրամ պարգևատրում 5-րդ երեխայի ծննդյան համար |
| 20 | Արզունյան Բելլա<br>Մնացականյան Վարսամ | 3 երեխա, 7 թոռ, Դահիրավ | Տրվել է լվացքի մեքենա |
| 21 | Ասրյան Մարիամ<br>Ամիրշատյան Արսեն | 4 երեխա, Եղցահող | Տրվել է լվացքի մեքենա |
| 22 | Արամյան Քրիստինե<br>Մազմանյան Միեր | 6 երեխա, Բաղարա, տեղահանված՝ Բերձորից | Տրվել է կով, հեռուստացույց |
| 23 | Մարգարյան Նաիրա<br>Մարգարյան Գագիկ | 5 երեխա, Քաշաթաղ շրջ., տեղահանված՝ գ. Վակունիսից | Տրվել է լվացքի մեքենա |
| 24 | Պետրոսյան Վարսիկ<br>Հակոբյան Արմեն | 3 երեխա, Աղավնո | Տրվել է կով |
| 25 | Հակոբջանյան Ալբինա<br>Աղախանյան Նարեկ | 3 երեխա, Աղավնո, տեղահանված չէ | Տրվել է կով |
| 26 | Բաղդագյուլյան Մելինե<br>Մաթևոսյան Արիկ | 4 երեխա, Աղավնո, տեղահանված չէ | Տրվել է կով, 50000 դրամ պարգևատգրում 5-րդ երեխայի համար, |
| 27 | Աբրահամյան Մարգարիտ<br>Զախարյան Հայկ | 3 երեխա, Մեծ Շեն, տեղահանված չէ | Տրվել է կով |
| 28 | Գևորգյան Անահիտ<br>Գևորգյան Ազատ | 7 երեխա, Բերձոր | Տրվել է հեռուստացույց |
| 29 | Թովմասյան Ժենյա<br>Օրդուբեկյան Սամվել | 7 երեխա Բերձոր, տեղահանված՝ Սոնասարից | Տրվել է լվացքի մեքենա |
| 30 | Առուստամյան Լուիզա | Օգնություն (բացառություն), Ստեփանակերտ, տեղահանված Շուշիից, | 50000 դրամ |
| 31 | Էլիզբարյան Ռիմա<br>Ազարյան Արթուր | 3 երեխա. Եղցահող համայնքի գ. Կանաչ Թալա, տեղահանված Հաղրութի Արևշատ գյուղից | Տրվել է կով |
| 32 | Հակոբջանյան Ալբինա<br>Աղախանյան Նարեկ | 3 երեխա, Աղավնո | Տրվել է կով |
| 33 | Թադևոսյան Թամարա<br>Բլբուլյան Ալիկ | 3 երեխա, Աղավնո | Տրվել է կով |
| 34 | Իսախանյան Գայանե<br>Բաղասյան Մասիս | 3 երեխա, Աղավնո | Տրվել է կով |
| 35 | Ռասոյան Նարինե<br>միայնակ | 6 երեխա, Աղավնո | Տրվել է կով |
| 36 | Ավագյան Աիդա<br>Ավագյան Համլետ-զոհված | 4 երեխա, Աղավնո | Տրվել է կով |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | Գալստյան Ավետլանա-միայնակ | 4 երեխա, Եղցահող | Տրվել է լվացքի մեքենա |
| 40 | Գրիգորյան Արևիկ Խոսրովյան Էռնեստ | 8 երեխա, Մարտունու շրջան Ճարտար, տեղահանված Քաշաթաղի Հերիկ գյուղից | Տրվել է 2 կով |

## ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ

ՍՏԱՑԱԿԱՆ

ք.Ստեփանակերտ 20 հոկտեմբերի, 2021

Ես՝ ԱՀ Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանի տնօրեն Անահիտ Գավրուշի Բաղրյանս, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացաթվով 12 միավոր հետևյալ գրքերը.

1.**Աղաջանյան Ս.,** Մշակույթի տեսություն, 3 միավոր

2.**Յակոբեան Ա.,** Արքայատոհմերն ու իշ-խանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմում, 1 միավոր

3.**Տեր-Ղևոնդյան Վ.** և **Սողոմնյան Զ.,** Մատենադարանի պարսկերեն հրովարտակ-ները, հ. 5, 3 միավոր

4.**Մուրադյան Ս.,** Գրական հանգրվաններ, գիրք Դ, 1 միավոր

5.**Ոսկանյան Ս**., Կալանավորը, գիրք IV, 2 միավոր

6.**Ոսկանյան Ս.**, Պիեսներ: Պոեմներ: Բանաստեղծություններ, գիրք Բ, 2 միավոր

Ընդամենը՝ 12 միավոր, որի համար ստորագրում եմ՝

Գրադարանի տնօրեն՝/ստորագրություն, կնիք/ Ա. Բաղրյան

ՑՈՒՑԱԿ

Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարան ՊՈԱԿ-ի ՝«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» անհատույց ստացած գրքերի

1.**Յակոբյան Ալ..** Արքայատոհմերն ու իշխանա-տոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմերում – 1 հատ

2.**Տեր-Ղևոնդյան Վ.** և **Սողոմնյան Զ.,** Մատե-նադարանի պարսկերեն հրովարտակները, հ. 5 – 1 հատ

3.**Ոսկանյան Ս.**, Պիեսներ: Պոեմներ: Բանա-ստեղծություններ - 2 հատ

4. **Աղաջանյան Ս**., Մշակույթի տեսություն – 1 հատ

5. **Մուրադյան Ս**., Գրական հանգրվաններ, գիրք Դ, 1 հատ

Ընդամենը՝ 6 հատ:

Հանձնեց՝ հիմնադրամի ներկայացուցիչ՝ ստորագրություն /Ս. Գալստյան/

Ստացավ՝ գրադարանի տնօրեն՝ /ստորա-գրություն /Ա. Միրզոյան/ 20.10.2021

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Բելլա Արզումյանս, ստացա լվացքի մեքե-նա, որն ուղարկվել էր «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմ-նադրամի» կողմից, որի համար ստորագրում եմ՝ /ստորագրություն/

Հաստատում եմ՝ գյուղապետ՝ /ստորա-գրություն/ Դավիթ Սարդարյան 09.05.2022

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Արսեն Ենոքի Ամիրշատյանս բնակվում եմ Շուշիի շրջանի Եղցահող գյուղում, ունեմ չորս երեխա: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» տնօրեն Գուրգեն Մելիքյանից ստացա մեկ լացքի մեքենա:

Ստացող՝/ ստորագրություն/ Ա. Ամիրշատյան

09 մայիսի, 2022 թ., հեռ.՝ 097- 30 – 40 – 84:

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Սվետլանա Գալստյանս, ունեմ չորս տղա երեխա, ապրում եմ Եղցահող գյուղում և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացա լվացքի մեքենա:

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Կարինա Կամոյի Ենիկոլոպյանս, Շուշիի նախկին բնակիչ, այժմ բնակվում եմ Մարտա-կերտում, վեց երեխաների մայր եմ (անձնագիր՝ AP 02799989), ամուսինս՝ Սամվել Վլադիմիրի Համբարձումյանը, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշա

թաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանից ստացա «Blaupunkt 32WB 965T» հեռուստացույց, որի համար հայտնում եմ շնորհակալություն:
Ստորագրություն (Կ.Կ. Ենիկոլոպյան)
Հեռ.՝ 097 10 14 83
22.06.2022

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը խորին շնորհակալություն է հայտնում Արթիկի «Գրինֆուդ» ՍՊԸ համասեփականատերեր **Կարապետ Վարդանյանին** և **Արտաշես Ավետիսյանին** հարյուր արկղ (1200 տարա) ելակի մուրաբա հիմնադրամին նվիրելու համար:

*Գ. Մելիքյանը, Զ. Ըռքոյանը և Ս Մեսրոպյանը Մոնթեի հուշաքարի մոտ*

Գլխավոր խմբագիր՝ Սամվել Մուրադյան-բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրակազմ՝
Ավագյան Ա., բ.գ.դ., պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր

Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի
Համարի լուսանկարները՝ Զ. Ըռքոյանի:
Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:
Հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետ, 212 սեն.,
հեռ.. 060 710 617, 055 -52- 29-36, 55 -25-37, 52-29-36: